



ԲԱԶՄԱՎԵՊ

ԱՄՍԱԳԻՐ

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

ԲԱԶՄԱՎԵՊԻ խմբագրութեան հետ թղթակցել ուզողները թող գրեն
մեզ հետեւեալ հասցէիւ.

Rédaction de la Revue «BAZMAVEP»

St. Lazare

digitised by

A.R.A.R. @ VENISE (Italie)

ՆՈՐ ՄՈՒԹԻՒՆ ՍԸ, ԱՍՏՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ ԵՒ ԹԵՐԵՐ

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՒԹԻՒՆ

Իրումբ մը փարիզեանոկ ազգայիններ Մարտ 31ին հիմնած են «Փարիզի հայկական միութիւն» անուամբ ընկերութիւն մը, որուն կանոնադրութիւնը, զոր կը հրատարակենք ի ստորեւ, արդէն ֆրանսական իշխանութեանց ներկայացուած է արձանագրուած է ըստ օրինի:

Տնօրէն խորհուրդը կը կազմուի հետեւեալ անձինքներէն. ՊՊ. Նէրսէս խան Ներսէսեան՝ Ա. տենպետ, Շիրվանզատէ՝ Փոթի - տենպետ, Համբարձում Մելիքեան՝ Գանձապան, Ա. Չօպանեան՝ Առնաղալի, Բժշկապետ Աւետիք Բարոյեան, Յ. Իսկէնտէր, Մ. Բովակիմեան:

Ինչպէս կը տեսնուի ծանօթ գէժքեր են որ յանձնառու կ'ըլլան այդպիսի օգտակար գործի մը հիմնարկութեան: Եւ մենք պիտի փափագինք որ այդ նորահաստատ ընկերութիւնը նախ յաւորուի եւ իր կանոնադրութիւնը և առաջադրութիւնքը իրագործուին. առ՝ այս անհրաժեշտ է դրամական նպատակ, և երկրորդ միութիւն Միութեանց:

ԿԱՆՈՆ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Փ Ա Ր Ի Զ Ի

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՈՒԹԵԱՆ

Ն Պ Ա Տ Ա Կ

Յօդուած 1. «Փարիզի Հայկական Միութիւն» (հետեւեալ նպատակն է.

I. Նպատակն, օրինական միջոցներով, հայ ազգի բարոյական և նիւթական շահերու պաշտպանման:

II. Հանդիման թաղարարութիւնը աշխարհին՝ Հայութեան անդեալ ու ներկայ կենսը և մասաւր գործունեութիւնը:

III. Տարածել հայ ժողովրդին մէջ արեւմտեան քաղաքակրթութիւնը:

ԳՐՈՒՄԻՆՈՒԹԻՒՆԸ ՄԻՋՈՑՆԵՐ

Յօդուած 2. «Փարիզի Հայկական Միութիւնը» իր նպատակն իրագործելու համար ի գործ պիտի դնէ նետեւեալ միջոցները.

Ա. Պիտի օգնէ տաղանդ ցոյց տուող հայ ուսանողներու, զոր Տնօրէն խորհուրդը արժանի կը գտնէ:

Բ. Պիտի նպատակ հայ թատրոնի զարգացման:

Գ. Պիտի օգնէ հայերէն լեզուով դասկան, գիտական, պատմական, գեղարուեստական լինելագիր ու թարգմանական գործերու, ինչպէս և օտար լեզուով

Հայութիւնը իր օգուտին ճանչցնել ձգտող աշխատութեանց հրատարակման:

Դ. Պիտի կազմակերպէ Փարիզի՝ ինչպէս եւրոպական ուրիշ քաղաքներու մէջ՝ երկկողմանի և դասակարգութիւններ՝ հայ հրաժաշտութիւնը, գրականութիւնը և ընդհանրապէս հայ արուեստը և Հայոց անցեալ ու ներկայ պատմութիւնը ճանչցնելու համար եւրոպական հասարակութեանց:

Ե. Պիտի հրատարակէ գրքեր՝ նոյն նպատակով:

Չ. Պիտի ջանայ մասնակցի՝ իր ներկայացուցիչներուն միջոցով՝ գրական, գիտական և այլ միջազգային համաժողովներու:

Խ. Ազգային մեծ աղէտներու և զոքազոյթութեանց պարագային՝ նիւթական և քաղաքական օգնութիւն պիտի ջանայ հաղցնել հայ արկածախնդիրներուն:

Բ. Պիտի հիմնէ Փարիզի մէջ հայկական թանգարան մը և հայկական մեծ մասնաւորարան մը, ուր պիտի հաւաքուին հայերէն լեզուով երեցող բոլոր լրագիրները, գրքերը, կնի ձեռագրեր, ինչպէս և օտար լեզուներով Հայոց մասին լրջ տեսած բոլոր հրատարակութիւնները:

Պ. Պիտի աշխատի հիմնելու Փարիզի մէջ գիշերօթիկ միջնակարգ քոյէժ-լաւորապետանոց մը:

Ժ. Պիտի հիմնէ «համազգային ֆոնտ» (fonds), որ պիտի պահուի եւրոպական մեծ գրաժաման մը մէջ, ըստ որոյման լրջէ. ժողովին:

«Փոնտ»-ը պիտի կազմուի ընկերութեան տարեկան հաւոյթներուն 20 0/0-ը վար գնելով, ինչպէս և այլ նպատակին համար մասնաւորապէս նուիրուած զուտարներով: Կաժմուս և «Փոնտ»-ի տարեկան տոկոսը կարող է ծախսուիլ ընկերութեան ընթացիկ գործունեութեանց՝ ըստ որոյման լրջէ. ժողովին:

Ինչէ. ժողովը կ'որոշէ՝ իւրաքանչիւր տարի լրեւնութեան տարադրած նիւթական միջոցներուն համեմատ՝ թէ այս աշխատանքն ձեռնարկներէն նախ որոնք և ինչ չափով պէտք է իրագործել:

ԿԱԶՄԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ

Յօդուած 3. «Փարիզի Հայկական Միութեան» զբաղման անդամացիլ ման չայ և Հայուն, որ այս կանոնադրութիւնը կ'ընդունի, և որ լրեւնութեան մեկ անգամին կորցնան կը ներկայացուի Տնօրէն խորհուրդին:

Յօդուած 4. Տարեկան անդամականութիւն 10 ֆրանք:

«Մշտական անդամ» է կանոնաւորութիւնն այն անձերը՝ որ մեկ անգամեւ կը վճարեն 250 ֆր.

«Բարեբաղ անդամ» է կանոնաւորութիւնն այն անձերը՝ որ 2500 ֆր. կը նուիրեն լրեւնութեան:

«Պատուական անդամ» է կանոնաւորութիւնն այն հայ և օտարազգի անձնատուութիւնները որոնք, կարեւոր անդամութիւն մը կը նուիրեն լրեւնութեան նիւթական ու քաղաքական բարոյականման:

Լրեւնութիւնը՝ բաց ի անգամաճաքներէն ու գրամական նուիրատուութիւններէն, կարող է նաեւ իր նուիր ընդունիլ գումարներ լրեւնութեան նպատակը շօշափող քառուի ծրարներէն համար, ինչպէս և կնի ձեռագրեր, գեղարուեստական առարկաներ, կնի գրամներ, և այլն:

Հաւոյթի մերոյիշեալ բոլոր միջոցներէն գատ, լրեւնութիւնը կարող է սաքել իրեն ի նպատակ՝ իրականացնելու իր ներքին, թատերական կամ հրաժաշտական և երկկողմանի:

Յօդուած 5. Տնօրեն խորհուրդը կը վարէ Ընկերութեան գործերը: Այդ խորհուրդը կ'ընտրուի Քնդհանուր ժողովէն, բայ՛ր անդամներու քուէից համահաստիս սեփականութեամբ:

Քուէից հաստատութեան պարագային, գինակ կը ձգուի ընտրելներուն միջև:

Յօդուած 6. Տնօրեն խորհրդին անդամները կ'ընտրուին երկու տարուան համար. տարին անգամ մը անդամներն կ'երէ բաց ի նախագահէն՝ կը վերանորոգուի:

Յօդուած 7. Տնօրեն խորհրդին անդամները վերենտրելի են:

Յօդուած 8. Տնօրեն խորհուրդը կը բազմանայ եօթն անդամներէ. Ասենապետ, Փոխ - Ասենապետ, Ասենապետի, Գանձապահ, և երեք խորհրդական անդամ:

Յօդուած 9. Տնօրեն խորհրդին նիստերը օրինաւոր են՝ երբ անգամոց սեփականութիւնը ներկայ է:

ԸՆԴՀԱՆՈՐԴ ԺԱՊՈՎ

Յօդուած 10. Տնօրեն խորհուրդը տարին անգամ մը Ընդհ. ժողով կը դուստրէ. Ընկերութեան նիւթական ու բարոյական կացութեան ու տարուան ընթացքին իր կատարած բոլոր գործերուն մասին հաշիւ տալու համար:

Յօդուած 11. Կարեւոր պարագաներու մէջ, Տնօրեն խորհուրդը՝ իր նախաձեռնութեամբ կամ Ընկերութեան անդամաց մէկ երրորդին առաջարկութեամբ՝ կարող է արտաքյ կարգի Ընդհ. ժողով դուստրել:

Յօդուած 12. Տնօրեն խորհուրդը՝ Ընդհանուր ժողովի գումարածին երկու ամիս առաջ՝ պիտի պատրաստէ օրակարգը և քննելի խնդիրներու յայտագիրը, ինչպէս և յաջորդ տարուան գործունէութեան նախագիծը և ելեւմուտից նախահաշիւը, և պիտի զրկէ անդամներուն Ընդհանուր ժողովի թուականը և Օրակարգը կանխաւ պիտի հրատարակէ թերթներու մէջ:

Յօդուած 13. Քնդհանուր ժողովը իր իրաքանչիւր գումարման՝ իր գինանը կ'ընտրէ Ընկերութեան անդամաց մէջէն:

Յօդուած 14. Ընդհ. ժողովին կարող են մասնակցել Ընկերութեան բոլոր անդամները և կամ՝ իրենց լիազօրները: Մէկ լիազօր չի կրնար աւելի ևս յն ունենալ քան 1,10ը Քնդհանուր ժողովի ձայներուն:

ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԽՈՒՄԵՐԻ

Յօդուած 15. Տնօրեն խորհուրդը կարող է օժանդակ մասնախումբեր հաստատել ուրիշ հայրենակ քաղաքներու մէջ: Այդ օժանդակ Մասնախումբերը պիտի գործեն Տնօրեն խորհուրդին հրահանգով:

ԿԱՆՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Յօդուած 16. Կանոնագրութեան ո՛ր է մէկ յօդուածը այն ստեղծ միայն կրնայ փոփոխուի՝ երբ Քնդհանուր ժողովը ձայներով երկու երրորդի սեփականութեամբ կ'որոշէ այդ փոփոխութիւնը:

Յօդուած 17. Այն պարագային՝ որ Ընկերութիւնը լուծուի, իր դրամադրուին ու բոլոր զրկերը պիտի յանձնուին՝ կէտը Ամենայն Հայոց Կաթողիկոսին, կէտը Պոլսոյ Հայոց Պատրիարքին՝ Հայ ժողովրդի կրօնական գործին յատկացուելու համար:

Գ Ր . Կ . Փ Ս Շ Ա Յ Ե Ա Ն . Ի Ա Ն Ի

ԸՆԴՀԱՆՈՐԴ ԺԱՊՈՎԱԿԱՆ ԱՊՐԵՍՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ

120 պատկերով

Ուսուցիչների, աշակերտների և ձեռնարկի ամսագիր

1906, Ալեքսանդրիա Էյպտոս, № էլ 679.

Մեծ. Հեղինակն ամէն ջանք բրած է՝ աւմենայն մասամբ կատարեալ, լաւ և օգտակար գործ մը ի լոյս ընծայելու, և ունեցած է իր առջև ազգային և օտար բժշկական գործերը: Ամենահարկաւոր և օգտակար օգնական մը զպրոցական վարիչներու:

Առանց ձանադարձածախի գինն է 6 րուբլի — 15 ֆր.

Գիտել.

M. le Dr. Paschayan Khan

ALEXANDRIE (Egypte)

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն

Տ Գ Ղ Ի Ռ Ե Ի Մ Բ Ե Գ Ր ՈՒ Թ Ե Ա Ն Ն Ե Ա Ս Ս Ա Ս

ԱՌԱՅՈՍ ՍՏԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԿ ԸՐ

Հետեւեալ նամակն ընդունած ենք՝ առանց ստորագրութեան և առանց թուականի. միայն ծրարի վրայ եղած դրոշմէն կ'իմանանք որ ՏԵԿ՝ զիսէն ուղարկուած է Ապրիլ 23ին, և վենետիկ հասած Մայիս 14ին:

« Արժանապատիւ Հայր.... »

Մի պատկերազարդ հրատարակութեան համար հարկաւոր են Ձեր կազմած « Հայոց Պատմութեան » (1901, Վենետ. հետեւեալ կիշէները..... երեւոյ պատկերն էլ հետը միասին՝ տասնութ կիշէն. ինչ կ'արժէ պղնձի և ի՞նչ ցինկի վրայ:

Բարենհանցեց խնդրեմ, Արժանապատիւ Հայր, այլ և գրելով՝ թէ ստուգելն երբ պատրաստ կը լինին այդ պատկերները, որովհետեւ եթէ Ձեր գրած պայմաններն ընդունելի եղան, հետագրով պատուով պատրաստել տալ և անմիջապէս ինձ ուղարկել »:

Այսպէս է նամակն, որուն կը պատասխանենք՝ որ ինչեւէ Հայոց Պատմութեան. պատկերներն յատկապէս յօրինուած ըլլալով Տպարանէն մեր հրատարակած Հայոց Պատմութեան համար՝ սոքոյ Տպագրատան սեփականութիւնը են, և հետեւա-

բար Տպագրատունը չի գիշանի՝ որ անոնց կիւ-
շէները չինուին և հրատարակուին ուրիշ տպա-
գրողներէ. յանձն կ'առնու միայն որքան օրի-
նակ պէտք լինի այդ պատկերներէն՝ շատ ձեռքն-
տու պայմաններով տպագրել և ուղարկել իրն-
գրողներուն, երբ իրենց գրած նամակին տու-
ղագրութեամբ անունին մօզի յայտնել բարե-
հաճին:

ԻՄՐԱՅԻՐՈՒԹԻՒՆ

Ս Ս Ա Յ Ո Ւ Ա Մ Գ Ր Ք Ե Ր

ՓՈՒՅԱՐԱՆՔ ԳՐ. ԲՅՇ. — Բանտիր և ճոցա-
բնակիչները (շոգեբանական հետազոտութիւն).
Թիֆլիս տպ. Յովհաննէս Մարտիրոսեանցի 1893,
8° 107 էջ, 15 կոպ.:

— Մեղապարտ Հրէյներ կամ Բանտ քէ հիւ-
ւանդանոց. Դրամա յորս գործողութեամբ. տպ.
անդ 1894, 8° 73 էջ, 20 կոպ.:

— Մեղապարտ փարիսեցիներ. Դրամատի-
կական անցքեր, հինգ պատկերով. տպ. անդ
1894, 8° 70 էջ, 20 կոպ.:

— Մխիթարյանը և հանգիստ, չափաբերա-
կան գրուածքներ, տպ. անդ 1893, 8° 94 էջ
20 կոպ.:

— Ատոյիկ (Մշոյ տառնդութիւն) պատկերա-
գարդ. Թիֆլիս, տպ. Ա. Յ. Մելիք Շահնազա-
րեանցի 1896, 8° 24 էջ, 20 կոպ.:

ԳԻՒԼՈՍԱՆՔ. — Մկա վայն չուլիւն, (Պատկեր չայ
զաղթականների կենսոյից) Թիֆլիս 1905, 8°,
48 էջ:

ՄԵՆԱՏՈՒՐԵԱՆ Գ. — Շերամ (Գութանի մա-
տենանի). Հատոր Ա. փարիզ 1906, 8° 50 էջ,
գին՝ ֆր. 1,50:

ՏԵՐ-ԱՍՏՈՒՆԱՐԵԱՆՔ ԼԱՅԱ. — Բառարան հայ
կենսագրութեանց (Հայագէտներով) 1441-1904.
Ա. Պրակ Առաջին, քառասուն և հինգ պատ-
կերներով. Թիֆլիզ, Արագածայի Ա. Գութամիւ-
լաձէի, իւլի. 21. 8° 181 էջ, 70 կոպ.:

— Խաչատուր Արովեան. (կենսագրական)
Տփլիս. Արագածայի «Աշխատանք» փրէյլի-
նովսկի փ. 1905. 30 էջ:

OHANNESSIAN B. — *La pressione san-
guigna nei malati di mente*. Reggio
nell'Emilia. Tip. De Stefano Calderini e
figlio, 1906. 34 pag.

FINCK FRANZ NIKOLAUS. — (Գրախօսական
մը հետեւեալ գրքին վրայ) Nersses Ter-Mi-
kaelian, Das armenische Hymnarium; հա-
նուած ի Göttingischen gelehrten Anzeiger
թերթէն:

ՅԵՌՈՒԱՅԵԱՆ ԱՐՄԵՆԱԿ. — Ապով Ալիի. 15
կտոր Ալիի տեսարաններ և եկեղեցիներ՝ իրենց
գոյներով ներկայացուած: Գինն ռպլ. 1. (ճա-
նապարհի ծախսը գնողին վրայ): Դիմել
Арменаку Петваджиянъ БАТУМЪ

ՆՈՐ ՍՏԱՅՈՒՆԱՆ ՓԵՐՓԵՐ

ԱՋԱՏ-ԽՈՍԻ, Շաքաթաթերթ: — Ե. Օսեան,
իր մի քանի տարի առաջ դադարեցուցած թեր-
թը նոր յրդանով կը վերսկսի. Բժնդին. Տարե-
կան 10 ֆր. 4 ռպլ.

Դիմել M. K. Nazarethian
Rue Stamboul ALEXANDRIE

ԱԼԻԻ, օրաթերթ, Բժ. Տիգր. Թաղէոսեանի
խմբագրութեամբ, Բժնդին. տարեկան 32 ֆր.
Rédaction « Alik »

TIFLIS

ԱՐԳԱՍԻԻ, շաբաթաթերթ, Ալեքսանդր Պար-
զեանցի խմբագրութեամբ. կէս տարուան բաժնե-
գին 7 ֆր.

Rédaction Argassik

TIFLIS

ԿԱՅԻՐ, օրաթերթ Ա. Երզնկեանի. խմբագրու-
թեամբ

TIFLIS

ՀՈՎԻԻ, կրօնական շաբաթաթերթ. խմբա-
գրութեամբ: Բժնդին տարեկան 4 ռպլ.

Rédaction « Hovive »

TIFLIS

Հ Ա Ս Կ Ե Ր

մ ա ն կ ա կ ա ն պ ա տ կ ե ր ա գ ա ր դ ա մ ա ա գ ի ր

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32-48 երեսանոց մեծադիր գրքոյկ-
ներով, նախկին ընդարձակ ծրագրով:

Ամսագիրը ունենալու է նաեւ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳԻՆՆԷ Է ԶԱՆԱՊԱՐՀԱՍԱԽՍՈՎ.

Տարեկան. ՀԱՍԿԵՐ. . . . 4 ռ. . առանց մանկավարժ. բաժնի Ցո.

Խմբագիր-Հրատարակիչ՝ Կառո. Լիսիցեան

Խմբագրատան հասցէն՝ Tiflis (Caucase) Rédaction du journ. «Haskern».